

3KN3  
3-12

24 SEPT 2000 3

Գրադաստու Ծեր բայր յերեսների պահական  
09 DEC 2000

3

4

738

Անյօթեռող կուս-նամագուստին

## ԿՈԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ


(ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՑԵՎ  
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ)

(ՀԱՄԱԳՈՒՄՅՈՒՆ ՈՐԱԿԱՐԳԻ 3-ՐԴ ԿԵՏԸ)

ԸՆԿ. ԿԱԳԱՆՈՎԻՉԻ  
ԶԵԿՈՒՅՑՄԱՆ ԹԵԶԻՍՆԵՐԸ  
ՎՈՐՈՆՔ ՀԻՂՆԱՎԱՆՈՒՄ ՀԱՎԱՆՈՒ-  
ԹՅՈՒՆ ԵՆ ԳՅԵՒ ՀԱՄԿՈՄԿՈՒՄ (Բ)  
ԿԵՆՏՎ ՄԻ ԺԱՐՅՈՒՄ ՈՅՔ ԿՈՂՄԻՑ

3 КЛЗ  
4-12

ԿՈՒՍԱԿՑԱՆ  
ԲԱԿՈՒ — 1984



16 MAY 2013

8300.

Խամբագուց Հ. Ա. ԲԱՐԴԻՆՅԱՆ  
Սրբագրեց Ա. Ա. ՇԵՏՎԱԶՅԱՆ  
Տեխ. Խմբագիր Կ. ԹՈՒՄԱՆՅԱՅԻՆ

առջ քաշչի նոր աշ-  
ւի իրեն, հենց կու-  
ր կազմակերպե-  
լան կազմակեր-

քերությունում և  
ոնաւկայի վերացը  
աշխատակիցների  
միջազիս արտու-

4. Արհեմիու-

ե արտաւ

դություն

Հաճախոծ ե տպագրության 1934 թ. հունվարի 7-ին  
Մասքարագիր ե տպագրության 1934 թ. հունվարի 10-ին  
Տպագրաժամ թերթերի թվով 2.  
Տպագրական տուների թվով 120.000

Զնայուծ դասակարգային թշնամիների կատաղի դիմա-  
քությունն ու Գուսակցության զեմ դասակարգային թշնա-  
մու դորձակալության — ամեն զույնի ոպորտունիստների  
զբուծին, այնուամենայնիվ կուսակցության քաղաքականու-  
թյունը, նրա կենտկոմի քաղաքականությունը հաղթանա-  
փեց : Հաղթանակեց, նախ, այն պատճառով, վորովիչեան  
առե քաղաքականությունն համապատասխանում և միլիոնա  
վոր բանվորների և դրազգացիների դասակարգային շահե-  
րին, յերկրորդը, այն պատճառով, վորովիչեան բոլցեվիկ-  
յան կուսակցությունը, նրա կենտկոմը վոչ միայն քաղա-  
քական լրացնելիներ հոչակեցին, այլև կարողացան բոլց-  
վիկորեն, զործնականութեն կազմակերպել մասսաներին այդ  
լոգությունները կրանքում կիրառելու համար, վերակառուց-  
ման ընթանի խնդիրների համապատասխան կազմակերպել և  
վերակառուցիլ պրոլետարական դիկտատուրայի բոլոր որ-  
դաններն ու ազգարանները :

Կուսակցության 16-րդ համագումարում, բնորոշելով  
Խամբագուցման ըրջանում բոլցեվիկյան հարձակման ելու-  
թյունը, ընկե . Ստալինը մատնանշեց, վոր անհրաժեշտ է  
և պրոֆմիութենական, կոոպերատությային, խորհրդային և  
արյու մյուս մասսայական կազմակերպությունների գործ-  
ական առթով աշխատանքը վերակառացել, համապատաս-  
խան վերակառուցման ըրջանի պահանջներին. ստեղծել նր-  
անց մեջ ամելի ակտիվ և հեղափոխական աշխատակիցնե-  
րի կորից, հետ մզելով և մեկուսացնելով ոպորտունիստա-  
նեն, որեգույն յոնիստական, բյուրոկրատական ելմենտե-  
րին, այդ կազմակերպություններից դուրս վոնդել խորը  
239

Главает № 146 Заказ № 95. Норма зата 135. Тираж 13 000.

Типография "ИМ. Интернационал". Баку, ул. Садыкова 20/1



4220-99

և այլատերիած տարբերին և ներքեվից առջ քաշել նոր աշխատողների... մորիկիզացիայի յենթարկի էրեն, հենց կուսակցությանը հարձակման ամբողջ գոլ ու կազմակերպելու համար, ամբացնել և կոփել կուսակը, տան կազմակերպությունները» :

Նեկավարվելով այս ցուցմունքներով, կուսակցությունը հաշվետու ժամանակաշրջանում լուրջ միջոցներ և ձևոնարկել խորհրդացին, տնտեսական և կուսակցական կարմակերպությունների աշխատանքը բարելավելու համար, նըրաց աշխատանքը կուսակցության ու կառավարության լույսուն ու վրոշումները հաջողությամբ կատարելու պահանջների համապատասխան վերակառուցելու գծով; Այդ ժիջառումներից բոլորից խոչըներն ենին.

1. Թայոնացման հետագա ծավալումը — ոկրուզների վերացումը, նոր ըրջանների ստեղծումը և սովորությունների ու ՅԵԿ-ների քաղաքածինների կազմակերպումը, վորը ղեկավարությունը մոռեցրել ե գյուղին, կոլխոզին և ուղղել ե դյուղական աշխատանքի խոշորագույն թերությունները, մարդերի կազմակերպումն Ուկրայինայում, մի քանի մարդերի մասնացումը և այլն:

2. Ժողկոմատների, գլխավոր վարչությունների և տըրետների մանրացումը, վոր մատեցրեց ղեկավարությունը տողըն, արտադրական ողակներին, ձեռնարկություններին բաժանելով՝ ԺԵԿԻ — յերեք ժողկոմատների — Ծանր Արդյունաբերության ժողկոմատ, Թեթեկ Արդյունաբերության ժողկոմատ, Անտառների ժողկոմատ, Հողժողկոմը — յերեկու ժողկոմատների — Հողժողկոմ և Սովորովների ժողկոմատափ-Մատակարաբան ժողկոմատն Արտաքին Առևտության ժողկոմատ, Հաղորդակցության ճանապարհների ժողկոմատը՝ յերկու ժողկոմատի և մի վարչության — Հաղորդակցության ճանապարհների ժողկոմատ, Զրայիլ ժողկոմատ, Ճանարանության և անցկացումը և անձնակազմերի կրծառումը. ղեկավարության դրամանյակային — բյուրոկրատական մեթոդների և դիմագրկության դեմ պայքարելու նպատակով ածխարդյուն:

3. Խորհրդացին, տնտեսական որդանների դոման անցկացումը և անձնակազմերի կրծառումը. ղեկավարության դրամանյակային — բյուրոկրատական մեթոդների և դիմագրկության դեմ պայքարելու նպատակով ածխարդյուն:

Եերությունում և յերկաթուղային տրանսպորտում՝ Փունկցի ոնալկայի վերացումը, լավագույն ինժեներա-ու-ինժենիկական աշխատակիցներին ապարատներից և գրասենյակներից անժիշտություն տեղափոխելու:

4. Արհմիությունների մանրացումը, վար ուժեղացրել ե արտադրական միությունների կենտրոնների գերը, մատակարարման միասնականությունը — զորագույն բարձրագույն բարձրագույնների կեց բանվորական մատակարարման բաժիններների կազմակերպումը՝ ընդլայնելով նրանց իրավունքները և մասկ բանկուստների կազմակերպումը:

5. Յերկաթուղային, ողային տրանսպորտում՝ քաղաքածինների կազմակերպումը, ածխային և արդյունաբերության մյուս ճյուղերում, այդ թվում և Զրայիլ ժողկոմատում կուսակամակերպիչների սխատեմի կազմակերպումը:

6. Կուսակացության դոման ծավալումը, իրեն կուսակացական ինքնարքներագառության բարձրագույն ձերի, կուսակցության՝ իրեն սոցիալական շինարարության կազմակերպված ավանդաբարդի ամբացումը:

Այս աշխատանքի հաջողությունն ապահոված եր ինքնարքներագառության ծավալումով, մասսաների ակտիվությունը ստեղծագործական աշխատանքի մորիկիզացիայի մեջ թարկելով, սոցմբարմատը ու հարվածայնությունը:

Կուսակցության կողմից այս բոլոր կազմակերպչական հարցերի ժամանակին գնելը, դրանց կենսագործումը կուսակցությունն ու սոցիալական շինարարությունը ապահովեցնելով, լարու կարող եր առաջանալ կուսակցության ճիշտ գծի և նրա իրականացման կազմակերպչական աշխատանքի միջեւ:

Համեկոմկումի (բ) առանցքի բորդ համագումարը կամում ե, վոր չնայած պրոլետարական դիկտուտուրայի գծուների մերսկառուցումն անցկացնելու գծով ձեռք բերված հաջողություններին, այսուամենայնիվ կազմակերպչակության աշխատանքը դեռևս հետ և մնում քաղաքական դիրքեկտուրաների պահանջներից և ընթարարությերի կա շրջանի — յերկրարդ հաղմայակի շրջանի վիթխարի չափերով աճող պահանջները:

Սացիալիստական շինարարությամբ ներկա ըշջանը բը-  
նութեագրվում է զեկավարության առաջադրված ինդիբ-  
ների ե'լ ավելի բարդությունը, պահանջների ե'լ ավելի  
բարձրացմամբ:

Յերկրորդ հնդամյակի հմմական խնդիրները — կապի-  
տալիստական ելեմենտների վերջնական, վերացումը, եկանո-  
միկայում և մարդկանց գիտակցության մեջ կազմակերպմի  
մեացորդների հաղթահարուժը, նորագույն տեխնիկական բա-  
րձր հմման միա ամբողջ ժողովրդական անահության  
վերակառուցման ավարտումը, նոր տեխնիկայի և նօր ծեռ  
նարկությանների յուրացումը, գյուղատնտեսություն մեքե-  
նացումն ու նրա մթերատիւթյան բարձրացումը — ամ-  
բողջ սրությամբ հարց են դնում բոլոր բնագավառներում:  
աշխատանքի լորչակի, ասացին հերթին կազմակերպչական-  
դուրծնական զեկավարության մորակի բարձրացման մո-  
ւի:

Այժմ, յերբ հաղթանակել ե կուսակցության գլխավոր  
գիծը, յերբ կուսակցության քաղաքականությունը ստուգ-  
ված է կըանքում, վոչ միայն կուսակցության տնդամների,  
այլև միլիոնավոր բանվորների և աշխատավոր գյուղացի-  
ների փորձով, իր ամբողջ մեծությամբ ինդիր և գրիւմ  
կազմակերպչական աշխատանքը բարձրական զեկավարու-  
թյան մակարդակին բարձրացնելու:

Կազմակերպչական հարցը քարաքականությանը յենթարկէ  
ված հարց մեալուի, այնուամենայնիվ, այս տեսակեալից  
սացիալիստական շինարարության հետագա հաջողություն-  
ների համար բացառիկ նշանակություն է ստանում:

«Հաղիվ թե մորեն մեկը պնդի, թե բավական է մի-  
այն բավ քարաքական գիծ տալը, վար գործը վերջանա, —  
ու միայն գործի կեսն է. միշտ քարաքականություն տա-  
լուց հետո, անհրաժեշտ է այնպիսի աշխատակիցներ ընտ-  
րել, վարդեսպի գիրքերում կանգնած լինեն մարդիկ, վորոնք  
կարօղանում են իրականացնել գիրքեկախիները, կարօղանում  
են ըմբռնել գիրքեկախիները, կարօղանում են ընդունել այդ  
գիրքեկախիներն ինչպես իրենց հարտաքար և կորողանում են

անցկացնել կյանքում: Հակառակ դեպքում քաղաքականու-  
թյունը կորցնում է իր իմաստը, դառնում է ձեռքի թափա-  
հարություն» (Ստուլին):

Մինչդեռ լավագույն զեկավար աշխատագներից շատե  
րը նույնիսկ մինչև հիմա յել կարծում են, թե բարական  
և ճառ արտասանել, կամ կուսակցության գլխավոր գծին հա-  
վատարմ բանաձև զբել, մարդեսպի զեկավարության խթե-  
ղերը կատարված համարմի, այն ժամանակի, յերբ գործնա-  
կանում արդ իսկ զեկավարների կարգագրությունները՝  
կուսակցության գիրքեկախիներն անցկացնելու ուղղու-  
թյամբ տապարիվում են վատ բնարված աշխատակիցների  
շնորհիվ և բացակայում ե կատարման ստուգումը: Կազ-  
մակերպչական գործնական աշխատանքի հետ մնալը կաւ-  
սակցության քարաքական գծի պահպաններից, ներկա մոմեն-  
տում ստանձնն ցարունությամբ և սրությամբ Կենարունա-  
կան Կոմիտույի կողմից յերեվան և համայնք ածխարդյունա-  
րերության, մերկաթաղային արանսակորտի և Հոգժողկոմի  
ամբողջ սիստեմի մեջ:

Տամադումարը գտնում է, վոր արդ թերությունները  
մերաբերում են խորհրդացին, անտեսական և կուսակցա-  
կան աշխատանքի մյուս բնագավառներին:

Արդ թերություններից ամենագլխավարներն են զեկա-  
վարության գրասենյակային — բյուրոկրատական մեթոդնե-  
րն ու անուշաղբրությունը դեպի խորհրդացին — անտեսա-  
կան և կուսակցական ստորին որդաններ (գործարան, ցեխ,  
գյուղ, կողիող, սովորողի բաժանմունք):

Աշխատանքի մանրաբանություններն ուսումնասիրելու  
և կոնկրետ զեկավարության վրասրեն, «ընդհանուր» վե-  
րացական գիրքեկախիները ու բազմաթիվ հրամաններ առա-  
նելու:

Կառարման ստուգման և կաղերի բնարության պար-  
տականությունները ցածրութակ աշխատակիցների վրա դը-  
նելու:

Խորհրդացին և անտեսական սալարատոնների կենարունա-  
կան և միջին ողակների հաստիքների ուսումնալը, վոր ար-  
տուզությունից դեպի գրասենյակ և գրավում գզալի քանա-  
կության ինժեներական աշխատակիցներ, ապա

բատի. Փունկցիոնալ կառուցումը, վարչության գործի ապա կենտրոնացումը առանցյակ բաժններում ու սեկուլյար բառը և դրան վարպետ հետեւանք, ոպերատիվ ղեկավարության բացակայությունը.

Միանձնավարության ծայր աստիճանի թույլ լինելը, անձնական պատասխանատիվության բացակայությունը յեզ կառավարման դիմավորկությունը՝ ղեկավարության «կուլտիվալականության» անվան տակ.

Կուսակցության և կառավարության յերկաթե կարգապահության բացահայտ և քողարկված խախոռումը:

Բոլոր այս թերությունները վերացնելու և պառանատարիա ամի դիլուստրայի բոլոր որդանների աշխատանքները բավացնելու համար անհրաժեշտ է ղեկավարվել հետեւիյալ ցուցմունքներով:

Առաջինը. — «Ընդհանուր» և վերացական ղեկավարությունից անցնել կոնկրետ ղեկավարության, «Ընդհանուր» բանաձևներից անցնել ոպերատիվ վորոշումների, վորոնք հիմնված լինեն գործի մանրամասների ուսումնառարության և ճանաչման վրա, արտադրության և կառավարման առորին ողակների հետ համատափած (ցեխ, տեղամաս, ճռ նարկ, կոլխոզ, շուղաղ, ՄՏԿ, սովխոզ և այլն) սերու և կենդանի կապի վրա:

Երրրդը. — Ուժեղացնել ղեկավարների անձնական պատասխանատիվությունը նրանց հանձնված աշխատանքի համար, ինչպես կուսակցական, աճապես և խորհրդային դր ծով, վերացնել Փունկցիոնալականությունը և դիմավորկությունն աշխատանքի մեջ՝ սահմանելով խիստ միանձնություն:

Յերրորդը. — Կուսակցության և կառավարության դիմակալիների կատարման մանրադնենին ստուգում սահմանել աճապես, վոր կատարման ստուգումով վրազվի անձամբ կարգակերպության, հիմնարկության, ձեռնարկության ղեկավարը և վորպետի կատարման ստուգումն ապահովի կուսակցական և խորհրդային դիմավորկին ամրացումը:

Չորրորդը. — Առաջովիկ վորակյալ աշխատակիցների վորխադրումն ապահություն և գրաւանցակից՝ անմիջապես ար

տակը ությունը, կրծառելով վարչության ապարատները և բարելավել աշխատակիցների բաշխման գործի դրվագքը, պարտավորեցնելով հիմնարկության և ձեռնարկության ղեկավարին անձամբ ղեկավարելու այդ գործը:

Համագումարը գտնում է, վոր այս խնդիրների հաջող իրականացման անհրաժեշտ պայմանն է հանդիսանում ինքնաշխատության, սոցմքրտման, կուսակցական, բանվորական, կոլխոզային մասսաների և նրանց մասսայական կաղմակերպությունների ակտիվության և ինքնազործունեցության հետաղա ծավալումը:

Կուսակցության տասնյոթերորդ համագումարն առաջարկում է կիրառել հետեւյալ կազմակերպչական միջոցառումները:

## I.

### ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱՐԱՆ ՄԻՋՈՑԱԿԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՇԽԱՐԱԿԱՆ ՇՐՋԱՐԱՐՈՒՄ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ՅԵՎ

ԿՈՒՍԱԿՑՈՒԿԱՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՄԻՆ

1. Մի քանի վայրերում կուսակցության մեջ յեղած մեխանիկական ու անխափի ընդունելությունները վերացնելու նպատակով՝ կուսակցության անդամ և թեկնածու ընդունելու գեղքում սահմանել յերաշխավորությունների թվի և յերաշխավորողների ստաժի ավելացում։ Կուսակցության մեջ ընդունել միայն ակտիվիտետներին, վորոնք իրենց ցուցաբերել են հասարակական այս կամ այն կաղմակերպությունների աշխատանքներում։ ապահովել ընդունվողների մանրակրկիտ ստուգումը, այս գեղքում գնահատականներ պահանջել այն կազմակերպություններից, վորտեղ նա աշխատել է։

2. Կուսակցության մեջ ընդունելությունները և թեկնածուներին անդամ փոխադրելով վերսկսել ամբողջ կուսակ

Կության պատմը ավարտելուց հետո՝ այսինքն 1934 թվի  
յերկրորդ կեսին:

3. Նպատակ ունենալով Համ. Կ. (բ) Կ. շուրջը Համա-  
խլմբել կուսակցությանն առավելապես մոտիկ անկուսակ-  
ցական ակտիվատուներին, վորոնք գործով արտադրության  
մեջ, կոլտնտեսության մեջ — ցուցաբերել են իրենց ակտիվ  
ոգնությունը կուսակցությանը, բայց գեռյելքս ան-  
պատրաստ են կուսակցության մեջ ընդունվելու համար,  
կուսակցական առարին կազմակերպություններին կից առեղ  
ծել Համ. Կ. (բ) Կ. Համակրողների խմբակներ, վորոնք  
ամուպարման պիտի յենթարկին կուսակցական մարմինների  
բոլոր վիրոշումներին:

4. Դանելով, վոր ներկայումս կուսակցական բջիջների  
ինչպես իրենց կազմով, այնպես ել իրենց ինդիրներով փառ-  
տական աշխատանքի մեջ գերաձեւ են հին տիպի բջիջների ըջա-  
նակներից, համագումարը վորոշում և վերակազմել գոյու-  
թյուն ունեցող բջիջները՝ վորպես գործարանային, արանս-  
պորտի, Կարմիր բանակային, կոլխոզային, ԲՏՈՒՀ-ային,  
Հիմնարկային և արեստային կուսակցական կազմակերպու-  
թյունները, կուսակցական կոմիտեյի գլխավորությամբ,  
իսկ ցեխներում, հերթափոխություններում, բաժիններում՝  
ցեխային կազմակերպություններ՝ կուսակազմակերպիչների  
գլխավորությամբ, վորոնք ընտրվում են ավայլ կազմակեր  
պության ընդհանուր ժողովում և հաստատվում են գոր-  
ծարանային կուսակցական կոմիտեյի կողմից: — Այն կուս-  
ակազմակերպություններում, վորոնք կուսակցության 15 ան-  
դամից և թեկնածույից պակաս ունեն կուսկոմներ չստեղ-  
ծել, այլ ընտրել կուսակազմակերպիչներ:

Այն կոլխոզներում, վորտեղ կուսակցության յերեք  
անդամից պակաս կան, ստեղծել թեկնածուական կամ կու-  
սակցական — կոմյերիտական խմբակներ՝ կուսակազմակեր-  
պիչների գլխավորությամբ, վորոնք ընտրվում են ՄՏԿ  
քաղաքադիմների կողմից, իսկ այն կոլխոզներում, վորոնց  
ՄՏԿ-ները չեն սպասարկում, ընտրվում են ուսկոմների  
կողմից:

ԿԵՆՏՐՈՆԻ, ՄԱՐԶԻ, ՌԱՅՈՆԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԴՅ;  
ԿԱՎԱՐ ՄԱՐՄԻՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԿԱ-  
ՌՈՒՑՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ

5. Վերակառուցել մարդկոմների, յերկրային կոմիտե-  
ների և Համակոմիուսի (բ) ԿԵՆՏՐՈՆԻ բաժինները, վերաց-  
նել ներկայիս Փունկցիոնալ բաժինները, նրանց փոխարին  
ստեղծել ամբողջական արտադրական նյութային բաժին-  
ներ: Յուրաքանչյուր արտադրական ճյուղային բաժնում  
կենտրոնացնել տվյալ ճյուղի աշխատանքն ամբողջությամբ՝  
կենտրոնի գյուղածնի որինակով՝ կուսակազմակերպչական  
աշխատանքը, կագրերի բաշխումն ու պատրաստումը, ա-  
գիտմասսայական աշխատանքը, արտադրական պրոպագան-  
գան, համապատասխան խորհրդային, տնտեսական որգան-  
ների և կուսակազմակերպությունների կողմից կուսակցական  
վորոշումների կատարման հսկողությունը: Սահմանել բա-  
ժինների հետևյալ կառուցվածքը:

### ՀԱՄԿՈՄԿՈՒՄԻ (Բ) ԿԵՆՏՐՈՆԻ Մ

1. Գյուղատնտեսական բաժին
2. Արդյունաբերական բաժին
3. Տրանսպորտի բաժին
4. Պլանային - Փինհանս - առևտրական բաժին
5. Քաղաքական - վարչական բաժին
6. Կուսակազմակերպությունների բաժին
7. Լենինիզմի պրոպագանդի և կուլտուրայի բաժին և  
յերկու սեկտորներ՝ գործերի կառավարման սեկտոր և Հա-  
տուկ սեկտոր:

### ՄԱՐԶԿՈՄՆԵՐՈՒՄ ՅԵՎ ՅԵՐԿՐԿՈՄՆԵՐՈՒՄ

1. Գյուղատնտեսական բաժին
2. Արտադրական - տարանսպորտային բաժին
3. Խորհրդային - առևտրական բաժին
4. Լենինիզմի պրոպագանդի և կուլտուրայի բաժին
5. Կուսակցության ղեկավար որգանների (քաղաքային  
և ըջանային) բաժին և հատուկ սեկտոր:
- Մարզկոմներում, յերկրկոմներում, և ազգային կոմ-  
կումների կենտրոններում վերացնել քարտուղարություննե-

րը, թողնելով վոչ ավել, քան յիշկու քարտուղար՝ առաջին և յերկրորդ, քննության կարիք ունեցող հարցերն անմիջապես մտցնել բարեւ, իսկ մի շարք գործնական հարցերի մշակումը հանձնարարել վոչ թե հասուուկ հանձնաժողովներին, այլ կոմիտեների բաժինների վարչեներին և խորհրդային, պրոֆմիտթենական, կոոպերատիվ կոմիտենական ու այլ կազմակերպությունների աշխատողներին:

6. Ռայկոմների աշխատանքները վերակառուցել այսպես, վոր նրանք մոտենան արտադրական խնդիրներին, ուժեղացնել ույայկոմի կոնկրետ զեկավարությունը՝ կուսակցական տերիտորիալ կազմակերպությունների և դյուզիորակությունների նկատմամբ, քաղաքամինների, ույանի ամբողջ կոլլոգային կազմակերպությունների հետ միասին: Ռայկոմներում և քաղաքուներում (բացառությամբ խոչըր քաղաքների քաղկումների և ույայկոմների) վերացնել բոլոր բաժինները, նրանց փոխարքն ունենալ շրջող պատասխանատու հրահանգիչներ — ույայկոմների ու քաղկումների անդամներ, վորոնք կցվում են սկզբնական կազմակերպությունների վորոշ խմբի, վորտեղ նրանք պարտավոր են լինել, կազմակերպել կուսաշխատանքի բոլոր ճյուղերը՝ պրոպագանդիստական, ապխտմասսայական, կազմակերպչական և այլն:

Հրահանգիչների աշխատանքի ղեկավարությունը, կազմակերպությունը և կատարման սիստեմը գննել քարտուղարի և նրա տեղյակալի վրա:

7. Հավանություն տալ Համկոմկուսի (բ) կենտկոմի վորոշմանը՝ ՄՏԿ-ներում, սովորողներում և տրանսպորտում քաղաքամիններ կազմակերպելու մասին, վորոնք լիովին արգարացնել են իրենց:

Հանձնարարել կենտկոմին և հետադարյամ քաղաքամիններ կազմակերպել սոցիալիստական շինարարության հետ մնացող տեղամասերում, այլպիսիների կողմէց իրենց հարգածային խնդիրների կատարման համեմատ, նրանց դարձնելով սովորական կուսակցական որդաններ՝ կառուցված արտադրական տերիտորիալ-սկզբունքով:

Հանձնարարել կենտկոմին՝ ՄՏԿ-ների չուրջը նոր տնտեսական կենտրոններ ստեղծվելու կազմակցությամբ

կաղմակերպել նոր ինքնուրուցյան սայոններ, կամ ավելի պակաս զորություն ունեցող ՄՏԿ կենտրոններում յենթառայիններ, իսկ ՄՏԿ քաղաքամինները անհրաժեշտության դեպքում վերակացմէլ վորպես սայկոմներ ու յենթառայիոմներ:

8. Կուսակցության կանոնազրությունը հաստատել նոր խմբագրությամբ: (Տև հավելվածը):

## II.

### ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԽՈՐՃՐԴԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐԻԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼԻԹՅԱՆ ՎԵՐԱՅՄԱՆ ՅԵՎ ԿՈՆԿՐԵՏ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Վերացնել բոլոր խորհրդային՝ տնտեսական ապահանքների Փունկցիոնալ կառուցվածքը և վերակառուցել արդյունաբերության արտադրական տերիտորիալ սկզբունքը՝ սկսած սառին արտադրական ողակներից, վերջացրած ժողովական կոմատաների վրա:

Ժողովական հիմնական որգաններ համարել արտադրական, կամ արտադրական՝ տերիտորիալ վարչությունները, վորոնք պատասխանատու յին տվյալ տեղամասի ամբողջ աշխատանքի համար և վորոնք իրավունք ու պատասխանատվություն ունեն իրենց յենթառակա կազմակերպությունների ղեկավարման առանց բացառության բոլոր հարցերի նկատմամբ, մնացող Փունկցիոնալ սեկտորների իրավունքները սահմանափակել, կամ արգելել նրանց ղլխավոր վարչությունների ղլխի վրայով ղեկավարելու ստորին ողակները:

2. Պարտավորեցնել խորհրդային՝ տնտեսական որգաններին՝ գործնականում ապահովել յուրաքանչյուր ստորագաս որդանի, կամ առանձին-առանձին ձեռնարկների կոնկրետ ղեկավարությունը, ոպերատիվ միջոցառումներ:

րով, աշխատանքի ընթացքում ուղղելով նրանց թերությունները, կրծատելով միջանկյալ ողակների (միացություններ, տրեստներ և այլն) ցանցը, լայնացնելով ժողկոմատների անմիջական կապը խոշորագույն ձեռնարկների հետ:

3. Ժողկոմատների կենարոնական և տեղական որգանների միջև հաստատել պարտավորությունների խիստ ու համեմատաբար պարզ բաշխում, բարձրացնել տեղական, մարզային, յերկրային և հանրապետական կառավարական որգանների գերը, հատկապես տեղական արդյունաբերության գործում, ժողկոմատների գլխավոր վարչություններում կենտրոնացնելով միայն իրոք միութենական նշանակություն ունեցող ձեռնարկների դեկավարությունը:

Մարզերում, յերկրներում ժողկոմատների լիազորների փոխարեն ստեղծել ծանր, թեթև արդյունաբերության և մյուս ճյուղերի մարդաբային, յերկրային՝ վարչություններ, նրանց վրա պարտականություն դնելով կառավարելու ամբողջ տեղական արդյունաբերությունը, միաժամանակ կատարելով համապատասխան ժողկոմատի հանձնարարությունները:

4. 1934 թվին բոլոր խորհրդային բյուջեյից, տընտեսաշվային որգանների հաստիքը կրծատել մինիմում 10—15 սոկոսով, 1933 թվի դրանց համար սահմանած համտեքների համեմատությամբ, ինչպես և խիստ կրծատել հաշվառման և հաշվետվության գոյություն ունեցող ձեւիրը վերելից ներքեւ:

ԿԵԿԱՎԱՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ, ԿԱՏԱՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՅԵՎ ԿԱԴՐԵՐԸ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5. Տնտեսական և խորհրդային դեկավարների անձնական պատասխանատվությունն ուժեղացնելու նպատակով, խորհրդային տնտեսական աշխատանքի բոլոր առարեջերում վերացնել կոլեգիան, բացառությամբ ընտրովի խորհրդային որգանների:

Վերացնել կոլեգիաները ժողկոմատներում, ժողկոմատի գլուխը դնելով ժողկոմին և վոչ ավել քան յերկու տեղա-

կալ, ժողկոմատների կից կազմակերպել ժողկոմատների խորհուրդներ, յուրաքանչյուրում ընդգրկելով 40-70 հոգի, վորից կեսը պետք ե լինեն տեղական կազմակերպությունների և Հիմնարկների ներկայացուցիչները: Այդ խորհուրդները պետք ե նիստեր ունենան յերկու ամիսը մեկ անգամ:

Սահմանել, վոր մարզային, յերկրային գործադիր կոմիտեների, հանրապետությունների ժողկոմի խորհուրդների և քաղաքավոր վարչությունները յերկուսից ավել տեղակալներ չպիտի ունենան:

6. Վերացնել կատարման ստուգման գոյություն ունեցող հասուլ սեկտորները, առաջարկել բոլոր որդանների վարչությունների դեկավարներին՝ վերելից ներքեւ անձմբ առողջել համապատասխան որգանների վորոշումների ու կարգադրությունների կատարումը:

7. Ածխարդյունաբերության և յերկաթուղային տրանսպորտի որինակով՝ ապահովել ինժեներա - տեխնիկական կազմերի տեղափոխումը գրասենյակներից դեպի արտադրությունը՝ ժողովրդական տնտեսության և տեղական դեկավարման բոլոր ճյուղերում:

8. Աշխատանքի վարձատրության տարիֆները վերակառուցել այնպէս, վոր խթանվի անմիջապես ցեխում, աշխատամասի, արտադրության մեջ կատարվող աշխատանքը:

Ինժեներական - տեխնիկական բոլոր աղնիվ, հմուտաշխատողների համար, անկախ կուսակցականությունից, ապահովել արդյունաբերության, գյուղատնտեսության մեջ և այլ ասպարեզներում իշխող պատասխանատու դիրքերում ամենալայն չափով առաջ դնայու հանրավորությունը: Կազմակերպել աշխատողների տեխնիկական գործնական վրակի պարտադիր ստուգում ատտեստացիոն - սոուդիչ հանձնաժողովների միջոցով՝ անկախ կուսակցականությունից:

Պարտադիր անտեսական մարմինների ու ձեռնարկությունների դեկավարներին՝ տիրապետելու իրենց գործի տեխնիկայի հիմունքներին, մշակել արդյունաբերության և ժողովրդական տնտեսության յուրաքանչյուր ձյուղի

տեխնիկական այն մինիմումը, վոր բոլոր դեկավար աշխատողները պետք է պարտադրաբար ուսումնասիրեն վորոշ կե նշագագույն ժամկետում:

ՊԵՏԱԿԱՆ ՅԵՎ ՏԻՏԵՍԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԸ ԲԱՐԵԼԱՎԵ  
ԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՏԵՂԱԿԱՆ, ԽՈՐՃՐԴՅԱՅԻՆ,  
ՊՐՈՖՄՅՈՒՈՒԹԵՆԱԿԱՆ ՅԵՎ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԿԱԶ-  
ՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

9. Կաղմակերպել կառավարման որդանների աշխատանքի մասսայական վերահսկողությունը և մասսաների խստադույն քննադատությանը յենթարկել ապարատի բյուրոկրատական խոցերն ու թերությունները: Զեռնարկներում, դյուր դերում լայնացնել խորհուրդների սեկցիաների պատգամավորական խմբակները խոչը քաղաքներում կաղմակերպել պատգամավորական խմբակների յենթառայնային ու տեղային ժողովներ, դրա հետ մեկաեղ հատուկ ուշադրություն դարձնել կին ակտիվիտաներին, բանվորուհիներին և կոլտնահուսւհիներին այդ խմբակների և խորհուրդների սեկցիաների աշխատանքներին ներդրավելու վրա:

10. Արհմիություններին հանձնել ԲԳՏ բոլոր ստորին որդանների իրավունքները ձեռնարկություններում, բանաձատակարարման բաժիններին, բանվորական փակ կոոպերատիվներին, շրջ. սպառկոոպաներին, քաղկոոպաներին կից վերահսկիչ մարմինների դեկավարությունը:

Ծավալել և վորակապես բարձրացնել ձեռնարկությունների՝ իրենց արդարացրած շեֆությունը տեղական հիմնարկների նկատմամբ, արտադրության աշխատանքի սոցիալիստական համատեղությունը պետական հիմնարկների աշխատանքի հետ:

Վերականգնել իրեն արդարացրած կոմյերիտական «թեթեվ հեծելազորի» պրակտիկան, վորը հաջողությամբ յե-

րեվան եր հանում ապարատի բյուրոկրատական թերությունները: Բարձրացնել կոմյերիտական թվիչների պետական ապարատի կատարելիք աշխատանքի վորակը պետական ապարատի բարելավման ուղղությամբ:

### III.

## ԿԱԶՄԱԿԵՐՊԴԱԿԱՆ ՄԻՋՅԱՌՈՒՄՆԵՐ ԿՈՒՍԿՑԱԿԱՆ - ԽՈՐՃՐԴՅԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԵՂԱՅՆԵԼՈՒ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ


(ՀԵՄԱԿԱՆՈՒՄ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ Ե ԳՏԵԼ ԿԵՆՏ ԿՈՄԻ ՔԱՂՅՅՈՒՐՈՒՅԻ ՅԵՎ ԿՎՀ-Ի ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ)

1. Կառավարության վորոշումների կատարման վրա հսկողությունն ուժեղացնելու և խորհրդային կարգապահությունն ամրապնդելով սպատակով՝ գտնել անհրաժեշտ հետևյալ միջոցառումների անցկացումը:

ա. ԽՍՀՄ-ի ժողովական կից կառավարման հանձնաժողովը վերակազմել՝ վորպես կուսակցության համագումարի կողմէց ընտրվող ԽՍՀՄ ժողովական խորհրդային վերահսկողության հանձնաժողով, վորն ունենալու յերա ապարատը կենտրոնում և մշտական ներկայացուցիչները՝ հանրապետություններում, յերկրներում, մարզերում, այդ ներկայացուցիչները նշանակվում և հետ և կանչվում խորհրդային հսկողության հանձնաժողովի կողմէց:

բ. Վերացնել բանգյուղատեսչության ժողովամարը, վորը արգել կատարել և իր գրական գերը և նրա ապարատը հանձնել ԽՍՀՄ ժողովական կից գործող Խորհրդային վերահսկողության հանձնաժողովին:

գ. Խորհրդային վերահսկողության հանձնաժողովի ղեկավար նշանակել ԽՍՀՄ ժողովական նախադահի տեղականներից մեկին:



Զ. Կուսակցության և Համկոմկուսի (բ) կենտկոմի վորոշումների կատարման վերահսկողությունը ուժեղացնելու, կուսաբագապահությունը ամրապնդելու կուսակցական ետիկայի խախտման դեմ պայքարելու նպատակով անհրաժեշտ համարել կիրառելու հետեւյալ կազմակերպչական միջոցառումները.

ա. Կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովը վերակազմակերպել վորպես՝ Համկոմկուսի (բ) կենտկոմին կից կուսակցության համագումարի կողմից ընտրվող կուսակցական վերահսկողության (հանձնաժողովի), վորը իր ապարարությունն ունենալու համբաւություններում, յերկրներում, մարզերում և ներկայացուցիչները նշանակվում և հետ են կանչվում Համկոմկուսի (բ) կենտկոմին կից կուսակցական վերահսկողության հանձնաժողովի կողմից:

բ. Կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժաղովի ապարար հանձնել Համկոմկուսի (բ) կենտկոմին կից կուսակցական վերահսկողության հանձնաժողովին:

գ. Կուսակցության վերահսկողության հանձնաժողովի ղեկավար նշանակել Համկոմկուսի (բ) կենտկոմի քարտուղարներից մեկին:

\* \* \*

Կուսակցության 17-րդ համագումարը պարտավորեցնում ե բոլոր կոմունիստներին, վորտեղ ել վոր նրանք աչխատելիս լինեն, ապահովել սույն վորոշման մեջ ցույց տրված միջոցառումների կատարումը պրոլետարական դիկտատուրայի բոլոր որդանների աշխատանքների կազմակերպչական վերակառուցման և բարելավման գործում: Կուսակցության համագումարը նախազդուշացնում ե բոլոր կուսակցական, խորհրդային, պրոֆմիութենական, կոմյերիտական և այլ կազմակերպությունների աշխատողներին, առաջին հերթին կոմունիստներին, վոր լավագույն աշխատողներին խրախուսելով, կուսակցության կենտկոմը և խորհրդային ղեկավար որդաններն առանց անձնավորությունները հաշվի առնելու, ամեն տեսակի դիրքերից հանելու յեն և ստորին աշխատանքի յեն նշանակելու, խստորեն պատժելով այն աշխատակիցներին, վորոնք կիսախտեն կուսակցական և խորհրդային կարգապահությունը:

Կուսակցության 17-րդ համագումարը համոզված է, որ մեր կուսակցության անդամները կրտնվեն իրենց խնդիրների բարձրության վրա, իրենց ակտիվությամբ կողնեն կուսակցությանը և կուսակցությանը՝ պրոլետարական դիկտատուրայի ապարատները բյուրոկրատական թերություններից մաքրելու, պրոլետարիատի դիկտատուրան ամրապնդելու գործում, ել ավելի կրաքարացնեն կուսակցության ղեկավար դերը և կապահովեն յերկար համար յերկրորդ հնդամյակի լիակատար հաղթանակը:

---

**ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻՆ  
ՆՎԻՐՎԱԾ ԹԵԶԻՑՆԵՐԻ**

(ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՈՐԱԿԱՐԳԻ  
Յ-ՐԴ ՀԱՌՑԸ)

**ՀԱՄԱՍԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ  
(ՔՈԼԵՎԻԿԱՆԵՐԻ) ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅԱՆ  
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ  
ՆՈՐ ԽՄԲԱԳԲՈՒԹՅԱՎՐ**

**ԿՈՄՈՒՆԻԱՑԿԱՅՆ  
ԻՆՏԵՐՆԱՅԻՈՆԱԾԻ  
ՍԵԿՅԱՆ**

Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցությունը, վորը հանդիսանում է կոմունիստական ինտերնացիոնալի սեկցիան, ԽՍՀՄ պրոլետարիատի առաջավոր, կազմակերպված ջոկատն է, նրա գասակարգային կազմակերպության բարձրագույն ձևը:

Կուսակցությունը պրոլետարիատի, աշխատավոր գյուղացիության և բոլոր աշխատավոր մասսաների ղեկավարությունն է իրականացնում՝ պրոլետարիատի ղեկավարությի, սոցիալիզմի հաղթանակի համար մղվող պայքարում:

Կուսակցությունը ղեկավարում է պրոլետարական դիլտատուրայի բոլոր որդանները և ապահովում է սոցիալիստական հասարակության հաջող կառուցումը:

Կուսակցությունը միասնական մարտական կազմակերպություն է, վորը շաղկապված է պրոլետարական գիտակից յերկաթակուռ կարգապահությամբ։ Կուսակցությունն ուժեղ է իր համախմբվածությամբ, կամքի միասնությամբ և գործողությունների միասնությամբ, վորոնք անհամատեղի յին ծրագրից յեղած չեղումների, կուսակցական կարգապահության խախտման և կուսակցության ներսում ֆլուրակցիոն խմբավորումների հետ։

Կուսակցությունն իր անդամներից ակտիվ և անձնագոհ աշխատանք և պահանջում կուսակցության ծրագիրն ու կանոնադրությունը կենապործելու, կուսակցության և նրա որդանների բոլոր վորոշումները կատարելու, կուսակցության շարքերում միասնականությունն ապահովելու և ամրապնդելու յեղբայրական, ինտերնացիոնալ հարաբերությունները, ինչպես ԽՍՀՄ պղղությունների աշխատավորների, այնպես և աշխարհիս բոլոր յերկրների պրոլետարների միջև ամրապնդելու համար։

## ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՑԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Կուսակցության անդամ եւ համարվում նա, ով ընդունում է կուսակցության ծրագիրը, աշխատում է նրա վորեւե կազմակերպության մեջ, յենթարկվում է կուսակցության վորոշումներին և մուծում անդամավճարները:

2. Կուսակցության անդամը պարտավոր է. —

ա) Պահպանել ամենասիստ կուսակցական կարգապահություն, ակտիվ մասնակցել կուսակցության և յերկրի քաղաքական կյանքին, գործնականում կիրառել կուսակցության քաղաքականությունն ու կուսակցական որդանների վորոշումները.

բ) Անդուլ աշխատել իր գաղափարական գինվածությունը բարձրացնելու վրա, մարքիզմ՝ լենինիզմ՝ հիմունքները և կուսակցության կարևորագույն քաղաքական և կազմակերպչական վորոշումները յուրացնելու վրա և բացատրել դրանք անկուսակցական մասսաներին.

գ) Խորհրդային պետության մեջ, վորպես կառավարող կուսակցության անդամ, նա պետք է որինակ հանդիսանա աշխատանքային և պետական կարգապահության պահպանման բնագավառում, տիրապետի իր գործի տեխնիկային, անդամագույն բարձրացնելով իր արտադրական դորժարար վորակավորումը:

3. Կուսակցության մեջ անդամների ընդունելությունը կատարվում է բացառապես անհատական կարգով, նոր անդամներն ընդունվում են այն թեկնածուներից, վորոնք անցել են սահմանված թեկնածուկան ստաժը, քաղաքական դրագիտության գլորոցը և յուրացը են կուսակցության ծրագիրն ու կանոնադրությունը:

Կուսակցության անդամ են ընդունվում այն բանվորներ, կոլտնտեսականները, կարմիր բանակայինները, ուսանողները, ծառայողները, վորոնք իրենց ցույց են տվել համակարգող իսմբակներում, խորհանուրդներում, ողբովմիու-

թյուններում, կոմյերիտմիության մեջ, կոռուերացիայում, պատգամավորական ժողովներում կատարած աշխատանքի ընթացքում, այն կազմակերպության գնահատականը ստանալուց հետո, վորտեղ ընդունվողն աշխատել կամ աշխատում է:

Թեկնածուներից կուսակցության անդամ ընդունելու կարգը հետեւյալն է.

ա) Սահմանվում է չորս կոտեղորիա՝

1) Արդյունաբերական բանվորներ, առնվազն հինգ տարիա արտադրական ստաժով :

2) Արդյունաբերական բանվորներ, 5 տարուց պակաս արտադրական ստաժով, գյուղատնտեսականների բանվորներ, բանվորների և կորուստեսականների շաբաթերից դուրս յեկածիւրմիր բանակայինների և ցեխում կամ աշխատամասում անմիջապես աշխատող ինժեններա - տեխնիկական աշխատողներ :

3) Կոլտնտեսականներ, անայնաղործական-զբաղմունքային արտելների անդամներ և տարբական դպրոցի ուսուցիչներ :

4) Մնացած ծառայողներ:

բ) Կուսակցության մեջ մտնելու համար առաջին կատեգորիանին պատկենող անձինք ներկայացնում են Յերաշխություն կուսակցական համար անդամներից, յերկրորդ կատեգորիային պատկանող անձինք՝ հինգ յերաշխավորություն կուսակցական հնդամայա ստաժ ունեցող կուսակցության անդամներից, յերրորդ կատեգորիային պատկանող անձինք՝ հինգ յերաշխավորություն կուսակցական հնդամայա ստաժ ունեցող կուսակցության անդամներից, յերրորդ կատեգորիային պատկանող անձինք՝ հինգ յերաշխավորություն կուսակցական հնդամայա ստաժ ունեցող կուսակցության անդամներից:

Ծանօթություն. — Բոլոր կատեգորիաներով կոմյերիտմիությունից կուսակցության անդամ ընդունելիս՝ Համբենկոմյերիտմիությունից կամ շրջկոմի ներկայացուցչի յերաշխավորությունը, չորբորդ կատեգորիային պատկանող անձինք՝ 5 յերաշխավորություն՝ տասնամյա կուսակցության անդամներից:

գ) Այսու կուսակցությունների նախկին անդամներն ընդունվում են բացառիկ դեպքերում կուսակցության 5 անդամների յերաշխավորությամբ, վորոնցից յերեքը պետք է ունենան տասը տարրվա կուսակցական ստաժ, իսկ յերկուսը մինչեղափոխական կուստաժ և անդամներն արտադրական կազմակերպության միջոցով ու անդամնորեն չամ. Կ(բ)կ կենտկոմի հաստատումով, անկախ ընդունվողի սոցիալական դրությունից :

Ծանօթություն. — Կենտկոմը կարող է այլ կուսակցություններից դուրս յեկածներին կուսակցության անդամության մեջ վերջնականապես հաստատելու իրավունքը տալ առանձին յերկրային և մարզային կուսկոմիտեներին և ազգային կոմիտաների կենտկոմներին :

դ) Յերաշխավորությունների ստուգումը նախորդում և նկունելությանը և տեղական կուսկոմների պարտավորության մեջ և մտնում :

յե) Կուսակցության մեջ ընդունելու հարցը նախապես քննարկվում է կուսակց. սկզբնական կազմակերպության կողմից, վճակում է կազմակերպության ընդհանուր ժողովում և ուժի մեջ և մտնում՝ առաջին և յերկրորդ կատեգորիայի համար — ույակոմի կամ քաղկոմի հաստատելուց հետո, իսկ յերրորդ և չորրորդ կատեգորիայի համար՝ մարդկոմի, յերկրային կոմիտեյի, կամ ազգային կոմիտաների կենտկոմների հաստատելուց հետո :

զ) Յերիտասարդները մինչև 20 տարեկան հասակը ներառյալ կուսակցության մեջ են մտնում միայն Համբենկոմ-յերիմիթության միջոցով :

4) Յերաշխավորություն տվյալները պատասխանատու ին իրենց յերաշխավորյալների համար և անհիմն յերաշխավորություն տվյալ լինելու դեպքում, յենթարկվում են կուսակցական տուժի՝ մինչև իսկ կուսակցությունից վտարման :

5) Թեկնածուներից կուսակցության մեջ ընդունվածների կուսակցական ստաժը հաշվում է համապատասխան կուսակցական սկզբնական կազմակերպության ընդհանուր ժողովի կողմից տվյալ ընկերոջ կուսակցության անդամ ընդունելու մասին կայացրած վորոշման որից :

6) Մի կազմակերպության անդամ մի ուրիշ կազմակեր պության աշխատանքի ռայոնը վոխադրվելու դեպքում, հաշվում ե վերջինիս անդամ :

Ծանօթություն. — Կուսակցության անդամների վոխադրվելու մի կազմակերպությունից մյուսը, տեղի յի ունենում Համբենկոմի (բ) կենտկոմի սահմանած կանոնների համաձայն :

7) Կուսակցության այն անդամներն ու թեկնածուները, վորոնք յերեք ամսվա ընթացքում առանց հարցելի պատճառների անդամավճարները չեն վճարում, համարվում են կուսակցությունից զուրս մնացած, վորի մասին հայտնրդում ե ի գիտություն ստորին կազմակերպության անդամների ընդհանուր ժողովին :

